ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2021 թվականի N 185-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված 9-րդ մասի 7-րդ կետի և Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019թ. մարտի 29-ի թիվ 7/6 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անդամների և աշխատակիցների պարգևատրման և խրախուսման» կարգի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերի պահանջներով, ՀՀ հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Սահմանել երկրորդ եռամսյակի համար ՀՀ հաշվեքննիչ պալատի (այսուհետև՝ Պալատ) պարգևատրման ֆոնդի մեծությունը, «Պալատի անդամների պարգևատրման» ենթաֆոնդը, Պալատի անդամների պարգևատրման տոկոսային հարաբերակցությունը և պարգևատրման չափը, «Պալատի գլխավոր քարտուղարի և կառուցվածքային ստորաբաժանման մեջ չընդգրկված աշխատակիցների պարգևատրման» և «Պալատի կառուցվածքային ստորաբաժանումների պարգևատրման» ենթաֆոնդերի չափը՝ համաձայն հավելվածի:

2. Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ Ն.Սահակյանին՝
- սահմանված կարգով ապահովել պարգևատրման գումարների վճարումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ